

"Droschak"

ORGANE

de la Fédération

Revolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du "Droschak"

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Շ Ա Գ Է Ն-Ֆ Ա Ր Գ Ա Տ

(ՄԱՐԳԱՐ ՖԱՐԻԷԼԵԱՆ)

2/14 յունիս 97

Դարձեալ գոյժ մը Եգիպտոսէն:

Դաշնակցութեան համեմատաբար նոր զինւորներէն մէկը, որ վերջերս սկսած էր լուրջ ու անձնուրաց գործունէութիւն մը, յունիս 2/14-ին զոհ գնաց ժանտատենդին Նիկոսիոյ (Կիպրոս) հիւանդանոցին մէջ:

Հեռու ծնողներէ ու գուրգուրացող ընկերներէ՝ հիւանդանոցին տիւր ու սառն մենութեան մէջ անհետացող մեր ընկերոջ, իր պարտականութիւնը կատարելու ատեն ինկող զինւորի յիշատակին Դաշնակցութիւնը կընծայէ իր խորապէս զգացած յարգանքը:

ԽԱՂ ԹԷ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Երիտասարդ Թիւրքիան քայքայելու փորձեր են անում:

Սուլթանը ներումն է շնորհել, ով կը խոստանայ իր հակառակորդներէն ընթացքը փոխել: Այն ժամանակ, երբ մի ձեռքով դատի է քաշել «Մէշվէրէթի» ղեկավարներին, բանտարկել է անմեղ սահմանադրական Բէմալ բէյին, զինւորական դատի է ենթարկել բազմաթիւ Թիւրք ուսանողներին, միւս՝ ձախ ձեռքով ամենողորմածաբար ներման իրադէ է ուղարկում իր յատուկ պատգամաւորի՝ լրտեսապետ Ահմետ փաշայի հետ Պարիզ՝ ժընէ, տեղացի «Եղափոխական» Երիտասարդ Թիւրքերին՝ խոստանալով նրանց պաշտօններ ու ռոճիկներ: Եւ ահա՛ Թիւրք Եղափոխականների (°) մի մասը արդէն սակարկութեան մէջ է մտել և երազում է Թիւրքիա վերադառնալ:

Մի երկու տարի առաջ, երբ հայկական Եղափոխութիւնը յուսահատութեան էր հասցրել Թիւրքիայի բոլոր մտածող մարդկանց, այն ժամանակ, երբ տէրութիւնը կորուստից փրկելու համար Թիւրքերը մի ծեղէին պտտում խեղճելուց ազատելու համար, երիտասարդ Թիւրքերը նորից գլուխ բարձրացրին: Կարճ ժամանակի մէջ առաջ եկան «կազմակերպութիւններ» ժընէում, Պարիզում, Եգիպտոսում. . . . Մուրադ բէյ, Ռիզա բէյ կատարեալ սարսափ էին դարձել տաճիկ կառավարութեան համար: Սուլթանի յաճախակի դիմումները, մերժողական պատասխանի էին արժանանում:

Երէկ դեռ Մուրադ բէյ—որ երիտասարդ Թիւրքերի մի մասի պարագլուխն էր— խրոխտացած շանթեր էր արձակում «Բոնաւորի» դէմ: Իսկ այսօր . . . ինչ որ պայմաններ դնելով, ժողովուրդի արիւն ծծող մի վաւերութեան հետ, կոմպրոմիսներ՝ անելով Եղափոխութեան և բոնութեան միջև՝ հրաժեշտ է տալիս իր սկզբունքներին:

Այս ի՞նչ հանելուկ է: Այդ ի՞նչ տեսակ Եղափոխական կուսակցութիւն է—ազամայ հարց է ծագում մեր գլխում:

1877 թիւն, երբ բուլղարական և այլ սլաւոնական ազգերի ազատութիւնը պատճառ բռնած՝ Ռուսիան իր թաթն էր մեկնում «մարդասիրաբար» իհաշիւ Թիւրքիայի՝ իր երկիրը մեծացնելու. երբ Տաճկաստանը արդէն յոյսը կորցրել էր սուլթան Աբդուլ օրով իր տըրքահանէի պատմութիւնը շարունակելու—ծագեց պաշտական մի խմբակ, որ ժամանակաւոր յաղթութիւն տանելով բռնապետութեան գլխին, ինքն էլ շուտով զոհ գնաց դէ համիդի խաբբայ դաւերին, առանց ցաւակցութեան իսկ արժանանալու ժողովրդի կողմից:

Երիտասարդ Թիւրքերը միշտ գլուխ են բարձրացրել երբ Տաճկաստանի ամբողջութեանը վտանգ է սպառնում եղել: Այդ է եղել Միտհաթ փաշայի օրով, այդ եղաւ և այս վերջին անգամ:

Այս է վիճակը վերեւից եկած բոլոր Եղափոխութիւնների, որոնք չեն եղել հիմնած ժողովրդի վրայ: Մի միայն այն կռիւն է յարատեւ, որ բղխում է ժողովրդից, և միմիայն այն Եղափոխական կազմակերպութիւնն է մնայուն, որը մարմնացնում է ժողովրդի բողոքը:

Այդ ժողովրդական բնաւորութիւնը կրում է հայկական Շարժումը: Ահա մի ժողովուրդ, որը շնայած իր կեանքի տաժանելի պայմաններին՝ ապրում էր իր Մայրենի հողի վրայ, տանելով ամէն տեսակ զոհանք, լինէր դա ընտանեկան թէ կրօնական: Նա բաժին էր տալիս կեղեքողին, թալանողին, և իզարմանս բոլոր կուլտուրական ազգերի, կարողանում էր տնտեսապէս աւելի բարձր գտնւել, քան իր հարեան արտօնած քիւրդ և թիւրք տարրերը: Կուլտուրական այդ ժողովուրդը շունչը բերանը հասած՝ կրում էր շղթան . . .

Բայց Բեռլինի «փրկարար» վեհաժողովից յետոյ խնդիրը այլ կերպարանք առաւ: Թիւրքիան «պարտաւոր էր» բարենորոգութիւններ մտցնել այն գաւառներում, ուր հայերը մեծամասնութիւն էին կազմում: Իսկ հայերի թիւը տեղ-տեղ 50-60% -ից աւելի էր բարենորոգել խոստացած 6 վելայէթներում:

Եւրոպան խիղճը հանգստացնելու համար այդ կարկատանը անելուց յետոյ, ձգեց մեզ բաղդի բերմունքին:

Այդ օրից Թիւրքիան «պարտաւոր է» զգում ապացուցանել եւրոպացիներին, թէ ամէն տեղ հայ ժողովուրդը փոքրամասնութիւն է կազմում: Երականութեան մէջ ևս այդ բանը ստեղծելու համար, չինայեց ո՛չ մի միջոց:

Ջանաց այնպիսի պայմաններ ստեղծել, որին ոչ մի կուլտուրական ժողովուրդ չէր կարող ապրել: Պատերազմից անանկացած կառավարութիւնը իր հարկային նորանոր բեռներով ծանրացաւ ժողովրդի վրայ: Առանց երկրին յարմարութիւններ տալու, առանց ճանապարհներ և վաճառանոցներ բանալու, սկսաւ նահապետական այդ երկրում դրամով պահանջել տուրքերը: Զինեց քրդական ցեղերը, բացարձակ իրաւունք տալով նրանց աւերել Հայաստանը, և դրանով հասաւ երկու նպատակի. մի կողմից երկրի անհանգիստ տարրերը իրար հետ կռւացնելով՝ ինքը ազատ մնաց այս կեսվայրենի վտանգաւոր ցեղերի զսպելու ծախք ու նեղութիւնից. միւս կողմից՝ հայկական տարրը զգած, զրկւած իր ապրուստի միջոցից, սկսաւ գաղթել և գատարկել երկրից:

Քրդերի աւարաւորութիւնների իբր հետեւանք, տիրում է Հայաստանում կեանքի և գոյքի կապարեալ անապահովութիւն, — քայքայիչ մի պայման, որ ամէն մի կուլտուրական ժողովրդի կրտսիպի մասամբ թողնել հեռանալ, իսկ գլխաւոր մասին դիմել զէնքով դիմադրութեան՝ Յեղափոխութեան:

Հայ ժողովուրդը շատ լաւ տեսնում էր, որ քիւրդերը և նոյն իսկ իրենց հետ թշնամացած թիւրք տարրը, միմիայն գործիք են մոլի կառավարութեան ձեռքում, . . . Բայց այդ բանը զգում էին տաճիկ և քիւրդ ժողովուրդը . . .

Սրանք են պատճառները հայ ժողովրդի յեղափոխական շարժման: Ժողովուրդի վերը յիշած հասկացողութիւնն էր, որ իր կնիքը դրաւ մեր յեղափոխական կազմակերպութեան վրայ:

Եւ սկսաւ յեղափոխութիւնը:

Երբ թիւրք կառավարութիւնը իր վայրագութեան չափ ու սահմանին անգիտակ՝ Սասունի կոտորածով իբր աճրագործ հանդէս եկաւ Եւրոպայի առաջ, եւրոպական հասարակութիւնը հասկացաւ այդ հրէշային քաղաքականութիւնը և նրա զայրութի ճնշման տակ եւրոպական դահլիճները սկսան իրենց դիւանագիտական խաղերը:

Երեք տարւայ հայ յեղափոխական Շարժումը և դրան հետեւանք դիւանագիտական միջամտութիւնը, այն աստիճան յուսահատեցրին թիւրքերին, որ ամէն մէկը մի միջոց էր պտուտում այդ դրութիւնից ազատելու: Հայկական սարսափելի կոտորածների ժամանակ իսկ, թիւրք ժողովուրդը ճանաչեց իր դարեւոր հարեանի դէմ որոգայթ լարող դիւային երեսը, և իր հայ դրացուն շատ տեղ պաշտպանելով՝ ապացուցեց նստալեաց ժողովուրդների ընդհանուր շահերի գոյութիւնը:

Այդ հասկացաւ թիւրք ժողովուրդը: Նոյնը հասկացաւ նրա թուլամորթ ինքեղիգենտ տարրը: Ընդհակառակը, նա սարսափած Սոլսքոյների ծառերից, արհեստական միջոցով, կարծում էր, կարող կը լինի փրկել գլորւող կառավարութիւնը:

Պետութեան անկման վախը միայն, ծագած տագնապը առաջ բերին Երիտասարդ Թիւրքիայի արդի կազմակերպութիւնը, և ոչ թէ իրենց ժողովրդի և նրա հետ բաղդակից հայ և այլ նստակեաց ժողովրդների տաժանելի վիճակի գիտակցութիւնը:

Տագնապը քանի գնում մեծանում էր, դրա հետ մեծանում էր և Երիտասարդ Թիւրքիայի կազմակերպութիւնը: Օգոստոս 14-ի դէպքը վհատիչ կերպով ճնշեց երիտասարդներին, գլուխները կորցրել էին: Նրանցից մի քանիսը կարողացան ըմբռնել, որ իրենց փրկութիւնը թիւրք ժողովրդի յեղափոխութեան մէջն է, և թէ միմիայն հայ ժողովրդի հետ ձեռք ձեռքի տւած կարող կը լինին տապալել ընդհանուր թշնամուն, այս ճշմարիտ մտքի ծնունդն է Երիտասարդ Թիւրքիայի երեսը պարզ անող դէպի թիւրք ամբուր ուղղւած միակ կոչը: Այս մի մասը:

Միւս մասը խարխալում էր ցնորական երազների մէջ:

Կրետական և այլ տագնապալից խնդիրները աւելի մեծացնում էին երկու տեսակ մտածող թիւրք երիտասարդների միջև նշմարւած անջոպետը:

Յունական պարտութիւնը մի զտիչ միջնադէպ էր մաքրելու պատահական յեղափոխականներին: Երբ թիւրքերի արժան յաղթութիւնները տէրութեան քայքայման վտանգը ըստ երևոյթին չքացրին, այդ արտաքին երևոյթներով յափշտակեող «յեղափոխականները» սկսան կակղել: Եւ հասաւ այնտեղ, որ հայերիս յոյներին նկատմամբ արտայայտած համակրութիւնը, մի տեսակ հակաժրգրային և «որձագոյն» ցոյցեր նկատւեցան, իսկ ամենամեծ ձեռնածու Մուրադ բէյ

համարձակեցաւ, ֆրանսերէն լեզուով մի ստոր գրութեամբ, իմիջի այլոց մեղադրել հայ տարրը, թէ նա իբր իր յարձակումները միշտ ուղղած է խաղաղ տաճիկ ժողովրդի դէմ, մզկիթների վրայ և այլն: Այս մի ճարտար քէյ հասաւ իր նպատակին: Սուլթանը նրան ներում է, նշանակելով . . . հարեմի ներքինապետ:

Ահա ձեզ նոր տեսակի յեղափոխականներ (°), որոնք ծուռում են միշտ ոյժի կողմը, որոնց գոյութեան իրաւունքը միմայն քաղաքական ամբողջութիւն պահելն է: Դո՛ւք, որորմելիներ, սխալում էք ձեր հաշիւների մէջ, դուք խաբւած առերևոյթ յաղթութիւններից, մոռանում էք, որ կառավարութիւնը հասցրել է երկիրը վերջին ծայր թշուառութեան: Շատ չի անցնիլ, նորից Թիւրքիան կ'ընկնի աւելի սոսկալի տագնապի մէջ, այն ժամանակ կ'ուզենաք դառնալ դէպի յեղափոխութիւն, բայց դուք կ'արտաքսուիք, դաւաճան անունը ճակատների կ'պցրած ձեր արիւնակից իսկական յեղափոխականների կողմից: Մոռանում էք, անմիտներ, այն բոլոր ոճիրները, որի վրայ հիմնւած է ներկայ վարչութիւնը, մոռանում էք տնտեսապէս քայքայւած ժողովուրդը: Դուք համբոյրով մօտենում էք այն ձեռքին, որը նոյն իսկ ձեր վկայութեամբ թաթախւած է անմեղների արիւնով, այդ գոսացած ձեռքին, որ քանդեց Թիւրքիայի հիմքը... Այդ ի՞նչ փոփոխութիւններ են, որ կարողացան հաշտեցնել . . . սուլթանի քաղոր հայեանքը և նրա սեղանից իբր փշրանքներ ձեր առաջ թափւած սև դրամները:

Ձեր ամբողջ յեղափոխութիւնը հիմնւած էր հակառակորդի թուլութեան վրայ, և դուք «նամերդներ», ինչպէս մի տարի առաջ դաւաճանեցիք սուլթանին, այսօր էլ ծախում էք յեղափոխական դրօշակը: Հեռացէ՛ք, և շուտ, բայց միք մոռանալ պատմութեան դատավճիռը:

Մեր վերջին խօսքը ուղղում ենք ժողովրդի շահը հասկացող թիւրք երիտասարդութեան միւս մասին:

Հակառակորդը համեմատաբար ուժեղացած ժամանակ պատերազմի դաշուր թողնող ընկերների դատավճիռը կը տայ մօտիկ ապագան:

Շատ չի անցնիլ, ահարկու կոտորածների վրէժխնդիր ժողովուրդը, տնտեսական քայքայման հասցրւած հայ ազգը, չի թողնիլ հանգիստ քնել 19-դ դարու Դահապետին, որ պիտի գլուխի իր հետ տանելով ամբողջ ներկայ սիստեմը:

Օր առաջ փրկելու համար ձեր ապագան դուք էլ մօտեցէք ձեր ժողովրդին, տեսէք նրա խայտառակ վիճակը, տնտեսապէս համեմատաբար միայն պակաս այդ դժբախտ ժողովուրդը. հասկացէք նրա ցաւը և նրա բնազդաբար ըմբռնուած դարձրէք գիտակցական համոզում: Կազմակերպեցէք ներքին յեղափոխութիւն և այնպէս եկէ՛ք միզ հետ միասին կուելու ընդհանուր

թշնամու դէմ: Միայն այս պայմանով դուք կարող էք վստահ լինել մեր աջակցութեան վրայ, երբ դէն շարտած կը լինիք ձեր ծրագիրներից տաճկական գերիշխանութեան և ի՛նչ որ պատմական իրաւունքների անհեղեղ յաւակնութիւնները:

Շտապեցէ՛ք, եթէ ոչ, կըստըջանաք և այն ժամանակ արդէն ուշ կը լինի:

Ուրեմն, առաջ, թիւրք ընկերներ, կուենք ազատութեան համար: Անէծքով թողեցէք ձեր դաւաճան ընկերներին և ցոյց տւէք, որ կան և ձեր մէջ ժողովրդի դատը հասկացող գիտակից յեղափոխականներ:

ՆԱՍԱԿ ԾԱՊԻՆ-ԳԱՐԱՅԻՍԱՐԻՑ

1/43 յունիս 97

Վերջերս, ամէն ժամանակե աւելի, կը կրկնուի նորէն կէս-կատակերգական՝ կէս-հեգնական այն բառը, որ ամէն հայու դէմքին վրայ ցաւագին կծկում մը յառաջ կը բերէ՝ միշտ տխուր, կսկծցնող յիշատակներ արթնցընելով: Իբրև թէ Բարենորոգումներ, հիմնաւոր բարենորոգումներ հաստատուած ըլլան ամբողջ Հայաստանի մէջ:

Շատեր թերևս խաբւին երևոյթներէն, որովհետև քանի մը հայ ժանդարմ՝ և քանի մը անխիղճ ապիւկարներ (իբրև թէ քրիստոնեայ) օգնական-կառավարիչ անւանւած են: Մենք հիմա ցոյց պիտի տանք այդ կարծեցեալ բարենորոգումները իրենց իսկական գոյներով:

Անցեալին վրայ խօսելու մտադիր չենք. թէպէտև թիւրքը բարենորոգում բառը ստեղծելով խոստովանեցաւ արդէն խժդժութիւններու գոյութիւնը անցեալին մէջ:

Արդարադատ սուլթանը հրամայելէ ետք, որ ամէն տեղ կոտորածներ կատարւին, բարձրագոյն իրատէով արտօնած էր՝ այդ ահաւոր ջարդերու սարսափին տակ կրօնափոխ եղող հայերուն՝ իրենց նախկին կրօնին դառնալ: Երբ տակաւին թարմ էր այդ հրամանը, քանի մը հայեր յաջողեցան իրենց հայրենի կրօնին գիրկը դառնալ իսկ հիմա՝ քիչ մը հիննալով՝ իր ազգեցութիւնը կորսնցուցած կը թւի, ու մօտ օրէն թերևս գոյութիւնն ալ մոռցըլի: Այս օրերս, քաղաքիս մերձակայ Գոյուլու-Հիսար աւանի բնակիչներէն քանի մը կրօնափոխ հայեր բողոքագրով մը դիմեցին տեղիս կառավարչին, խնդրելով ոստիկաններու օգնութեամբ քաղաք փոխադրել իրենց ընտանիքը, յիշել տալով միևնոյն ատեն տարի մը առաջ իրենց կրօնափոխ մէկ դրացուհիին՝ այդ ճամբուն վրայ զինուորներէ չարաչար բռնաբարւած ըլլալը, որու մասին կառավարութիւնը սուտխուլ եղած էր: Քաղաքապետը՝ առանց ամենայնով բողոքողները վնասեց ըսելով. «Կորսուեցէ՛ք, անպիտաններ, գիւղին մէջ մահմետականութիւն կը դաւանիք, ու երբ քաղաք կուգաք քրիստոնեայ ըլլալ կ'ուզէք և այլն»: Թէպէտև խեղճերը ըսին՝ թէ այդ գիւղերն ամբողջովին թիւրք ըլլալուն համար, վախերնուն մահմետականութիւնը դաւանել կը կեղծեն . . . սակայն դարձեալ անօգուտ:

Այս օրերս թիւրք խուժանը ծայր աստիճան գրգռւած է յոյն ժողովուրդին դէմ. մասնաւոր առիթի մը կը ըստանան կոտորելու, ուրկէ անշուշտ հայեր ալ իրենց արդար բաժինը պիտի ունենան (°):

Գլխաւոր շուկային մէջ, խուժանը դրօշակ պարզած՝ կամաւոր զօրք կը գրւին Յունաստանի դէմ կռուելու համար. այդ կամաւորները բացէ ի բաց կ'ըսեն. «նախ կեաւորները սպաննենք պիտի հոս, ետքը պատերազմի երթանք»: Կառավարութիւնը, ինչպէս կը գուշակէր, գործին չեկած խօսքերը չլսելու կուտայ:

Հայերէն երկու տարի զինուորական տուրք չգանձելի հրամարած է. եկու տես, որ հիմա ալ տեղական գանձարանը բոլորովին պարապ է, մուկերուն ծիրիտ խաղալու յատկացուած. կառավարիչը բարկանալով հայերուն ըսաւ. «Միւս կարգի տուրքերը ամբողջովին, շուտով վճարուելու են, գիտցէ՛ք, որ իմ հարւածս աւելի սոսկալի կ'ըլլայ»:

Ասկէ առաջ՝ տպւած յայտարարութիւններով ազդարարեցաւ, որ զէնք կրելը ժողովուրդին խիստ կերպով արգիւլած է. ունեցողը սանկ պիտի ընեն նանկ պիտի ընեն: Այդ ազդարարութիւնները որո՞ւ համար են, զմեռի մը չունեցող խեղճ հայուն, թէ հաւատացեալ թիւրք ժողովուրդին. շուկայի մէջ առանց զէնքի պտըտող թիւրքը ճշմարիտ թիւրք չի սեպւիր, Մուհամմետի արժանի զաւակը չէ, ամենքն ալ զինուած են. ո՞ր է կառավարութեան խիստ արգելումները: Բայց դուք ալ իրաւունք ունիք խորհելու. կանոնը բացառութիւններով է, որ կը հաստատուի:

Մինչդեռ այսքան տագնապալի ու ձիգ դրութեան մէջ սրտադող կըսպասէր ժողովուրդը, յանկարծ ապրիլ 21-22-ի գիշերը, ժամը 5-ին ահագին իրարանցում մը տեղի ունեցաւ քաղաքին մէջ: 40-ժանտարմ և 250 զինուոր սկիներով զինուած՝ քաղաքին երկու արուարձաններէն իջան դէպի պղծիները: Այս դէպքը անմիջապէս ցնցեց ժողովուրդը. սարսափը ընդհանուր էր, առուրան դէմ ագոնք վերադարձան, բայց դէպքին շարժառիթը յայտնի չէ տակաւին: Կառավարութիւնը լուր հանեց, թէ նշանաւոր աւազակ և փախստական Էէյս-օղլին քանի մը ընկերներով ծխախոտ բերած է քաղաքին ձուր Գաւազներ ըսւած այգիներու թաղը, զօրքն ու ժանդարմները անոնք ձերբակալելու համար իբրեւ թէ գացած են: Բայց հայերը այդ վրանբաց սուտերէն խաբւելու ընդունակութիւնն իրենց ունեցած են բարեբախտաբար:

Հետեւեալ երկու օրերը հանդարտ անցան, բայց յանկարծ չորեքշաբթի իրիկուսն ձուր՝ առջինէն աւելի մեծ սարսափի մէջ ինկաւ քաղաքը: Երկու թիւրք ոստիկաններ, մէկը՝ նշանաւոր ոճրագործ Քէօր Եաղուպ օղլու նազիմ, և միւսը՝ ժանտարմի տասնապետ՝ Իսմայիլ, գինովցած՝ կ'երթան յոյներուն թաղը, Ռէժիի պաշտօնատան դուռը, նոյն պաշտօնատան միւտիւր յուսահատակ Մալթիտին սպաննելու: Փողոցին մէջ աղմուկը կը բարձրանայ. օգնական-կառավարչին ոստիկանը ձուր գտնուելով՝ վրայ կը հասնի և կ'ուզէ արգիլել. այդ պահուն բոլոր թաղեցի յոյները լացուկոծով կը սկըսին փախչիլ. ուրիշ անձ մըն ալ վրայ կը հասնի և ոստիկանին հետ հազիւ կը յաջողին համոզելով ետ դարձնել խռովարար սրիկաները: Աւերադարձին կառավարչի օգնականին ոստիկանը տուն մտնելով կը պատ-

մէ եղելութիւնը օգնականին, յայտնելով միանգամայն այդ չարագործներուն իրենց ձեռքը գտնուելը, բայց օգնականը, նիքօլաքի էֆ., շատ աղէկ գիտնալով կառավարութեան սկզբունքը՝ խոհեմութիւն կը համարի զէնքերով մէկտեղ ազատ թողուլ անոնք: Խաղաղութեան այդ գինով պահպանները չկրնալով իրենց մահմետականի սե վրէժը մարել «կեաւորի» կարմիր արիւնին մէջ, ճամբան Ռէժիի դէտերէն մէկուն հանդրակելով՝ կ'ուզեն անկէ վրէժ առնել, աղմուկ բարձրացուցած ու իրենց գործին արգելք եղած ըլլալուն համար: Իսմայիլ թուրք քաջելով՝ կը սկսի խեղճ գէտը փառաւորապէս տփել. այդ պահուն սակայն քաղաքապետը պատուհանը գտնուելով՝ երկու ոստիկան կը խորհէ կուրն տեղը, չարագործները բռնելու համար (°): Երկու ոչ-գինով ոստիկանները սակայն կը կարողանան վերջապէս, դիտմամբ, այնպէս մը շարժիլ որ փախչին սուլթանին արժանի խաղաղութեան (° ° °) այդ պաշտօնեաները: Մինչդեռ անոնք հրազէն պարպելով կը հեռանան քաղաքէն՝ ասդին ժողովուրդը գլուխը կորսնցուցած՝ շարած ոչխարներու պէս ասդին անդին կը վազվզէ վախուն: Այդ գիշերը մինչև լոյս հայ և յոյն անքուն մնացին:

Հետեւեալ օրը այդ երկու չարագործները ազատ կը պտըտէին շուկային մէջ հերոսներու կատարեալ հրպարութեամբ ու իրենց շահատակութեան փառքովը ուռած: Ձերբակալութեան վրայ չխորհիք բնաւ. ո՞վ գիտէ, թերեւս վաղը նշան մըն ալ առնեն իրենց քաղաքործութեան համար:

Դժուար է երկրին դրութիւնը ամբողջ ու կատարեալ նկարագրել. այս իրողութիւնները աւելի մանրացած՝ կամ խոշորցած, կրկնապատկեցէք ու բազմապատկեցէք:

Ահա խօսւած բարենորոգումները ու ահա բարենորոգած (°) երկրի մը վիճակը: Քաղաքապետին պատույ խօսքերը սակայն չեն կրնար ազատել քաղաքը լարւած դրութենէն. իրենց արիւնոտ սուլթանէն սորվել են կ'երեւի, պատույ վրայ երգւըննալ այս տեղի քաղաքապետներն ու փաշաները:

Սրտիս մէջ վախ մը կայ. բարենորոգումներու խօսքերով է, որ սկսան մեր խեղճ եղբայրներուն ջարդերը, երկրի մէկ ծայրէն մինչև միւսը: Բարենորոգումներու շատ յեղեղելիւր չարագուշակ նշան մըն է արդեօք, երկիրը նորէն կարմիր արիւնի մէջ թաթխելու համար:

Շրջակայ հայ գիւղացիք սովորական խոհեմութիւն համարած են քանի մը օր անգամ մը թողուլ գիւղերը և մատակայ լեռները փախչիլ. սարսափը մինչև ծով երկնին թափանցած է: Ոչ օգնութիւն կայ տեղէ մը և ոչ խրախուս, նոյն իսկ խորհելու կարողութիւնն իրոսցուցած են, միայն խոնարհութեամբ՝ թէ կառավարութեան ամենայնպէս պաշտօնեային, թէ հարստահարող պէկերու և սինլքոր թիւրքերու բոլոր պահանջները կատարել գիտեն մեքենայաբար:

Ազատ երկիրներու մէջ գտնուող մեր եղբայրները, անշուշտ, վաղուց գիտեն այս բոլորը, բայց կ'երեւի թէ ամբողջ հայութիւնը իրենց անձին մէջ կը տեսնեն: Քանի որ իրենք ողջ ու ազատ են, Ազգը այլևս պէտք չունի օգնութեան. կամ կը խորհին ապագայ ամայի Հայաստանին նոր նախահայրերն ըլլալ: Կուրի դաշտին վրայ գտնուող հայերը լաւ հասկցած են իրենց գրու-

Թիւնը. ամէն կերպով տրամադիր են կուելու. միայն միջոցը կը պակսի իրենց. մարդ կայ, բաւական է. կեանք չենք պահանջեր յեղափոխութենէ դասալիք եղող հայերէն. միայն ուժ, միջոց թող տան մեզի. ադ ալ բան մըն է: Մարդ կայ, բայց դատարկ են ձեռքերը. օգնութեան պէտք ունին. օտարներէն յուսալ խենթութիւն է. իսկ եթէ ազատ ազգակիցներէն չըստանանք՝ անխուսափելի կորուստը կըսպասէ մեզ:

Ու ո՞վ է մեղաւորը, անոնք, որ երկրին մէջ կեցած՝ իրենց և իրենց եղբայրներու կեանքը, պատիւը, ինչքը կը պաշտպանեն յամառաբար, թէ անոնք, որ իրենց փորձն ու իրենց անձն գործն չեն տեսներ հայութիւնը:

Ո՞վ է մեղաւորը:

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

10/22 յունիս 97

Գաղանները իրենց որջերուն մէջ ալ հանգիստ մընալ չեն ուզիր:

Նախորդ տեղապահ Բարթողիմէոսը և իրենները ձեռքի տակէ կ'աշխատին:

Նուրեան—Ձէյթունի մեծ մասնիչը յաւիտենականին առջև—իր հրէշի սև դէմքովը նորէն երևան կ'ելայ նոր սարսափներ ստեղծելու հայ ժողովուրդի գէլուն:

Վերջերս կառավարութեան մտքին մէջ կասկածներ արթնցնելու և ձերբակալութիւններու մղել տալու համար՝ Նուրեան նոր հնարքի մը կը դիմէ. լուսանկար մը կը խրկէ ոստիկանութեան նախարար Շէֆիկ պէյին յայտնելով թէ ատ պատկերն է յեղափոխականի մը, որ նորերս մտած է Պոլիս սարսափելի ծրագրներ իրագործելու նպատակով: Շէֆիկ պէյ անմիջապէս քննութիւն կը բանայ, լուսանկարը ոստիկանութեան Դռան հին աղէտներուն ցոյց կուտայ՝ անոնց կարծիքը առնելու համար: Մէջերէն մէկը լուսանկարը կը ճանչնայ և կը յայտարարէ՝ թէ այդ մարդը մեռած է Վանի մէջ. անմիջապէս հեռագիր կը զարնւի Վան և քննութենէ մը ետքը կը հաստատուի այդ պաշտօնեային ըսածը: Վերջապէս համոզում կը գոյացի՝ թէ Նուրեանի նպատակը ուրիշ բան չէր, բայց եթէ կառավարութիւնը մղել խստութիւններ իգործ դնելու և խոչընդոտներ հանելու ազգային արդի վարչութեան դէմ:

Ար կարծւի թէ սուլթանը ինքն ալ իմացած է այս դէպքը:

Կառավարութիւնը Օրմանեանի կրկնակի խնդրանքներուն առջև՝ վերջապէս կը զիջանի կարգադրելու Սիսի կաթողիկոսութեան խնդիրը, որ Իւլիւրեանի օրէն առկա մնացած էր: Բայց սուլթանի ճարպիկ քաղաքականութիւնը այնպիսի լուծում մը տալ կ'ուզէ այս խնդրին, որ արդէն եղած բարդութիւններուն վրայ նոր բարդութիւններ աւելցնելով ազգային վարչութիւնը կը ձգէ շատ դժուարին կացութեան մը մէջ: Կառավարական այն իրադէն, որ տրւած է այդ առթիւ, թէև Գաղանձեանը կաթողիկոսութենէ կը հրաժարեցնէ, բայց միւս կողմէն չեղեալ կը նկատէ Ալէքսանդրի ընտրու-

թիւնը, նոր ընտրութիւն կը հրամայէ և միանգամայն կը պահանջէ, որ ասկէ ետք Սիսի կաթողիկոսը անմիջապէս յարաբերութիւններ ունենայ Դռան հետ և ոչ թէ Պոլսի Պատրիարքանի միջոցով: Այս ոչ այնչափ նոր պահանջէն յայտնապէս կ'երևնայ, որ օսմանեան կառավարութիւնը կ'ուզէ Սիսի կաթողիկոսութեան տալ անկախ, ազատ դիրք մը և բարձրացնել ան իմաստ եղբայրների կաթողիկոսութեան և Պոլսի Պատրիարքութեան: Եղբայրները առիթ մը եղած է ռուս կառավարութեան համար միջամտելու օսմանեան հայոց գործերուն, և Եղբայրների կաթողիկոսի գերագահութիւնը մինչև հիմա իբր գիւնադիտական առաւելութիւն մը նկատւած է՝ ռուսական ազդեցութիւնը պահպանելու, ինչպէս պարսկահայտակ՝ նոյնպէս և օսմանեան հայերուն վրայ:

Կառավարութեան բռնած այս ուղղութիւնը մեզի իրաւունք կուտայ կասկածելու, որ Բ. Դուռը ապագային թող պիտի չտայ, որ օսմանեան հայերը մասնակցին Եղբայրների կաթողիկոսի ընտրութեան, պիտի չուզէ, որ Տաճկաստանի մէջ ապրող հայերը ենթակայ ըլլան անոր բարոյական ազդեցութեանը. բան մը՝ որ իրեն համար շատ մեծ կարեւորութիւն ունի: Երբ անգամ մը Սիսը Պոլսի Պատրիարքարանէ անջատ՝ անկախ գլուխ մը ըլլայ, սուլթանի քաղաքականութիւնը առիթ չի պիտի փախցընէ քակելու համար օսմանեան հայերու Եղբայրների հետ ունեցած բարոյական և նիւթական կապերը, առարկելով. «Կաթողիկոս կ'ուզէր, ահաւասիկ ձեզի Սիսը, անոր դիմեցէք. Եղբայրներն պէտք չունին»: Եւ երբ սուլթանը կ'ուզէ այս ծրագիրն իրագործել, ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ ազգային-կրօնական ամէն խնդրի մէջ իրեն վերապահել ամենամեծ ազդեցութիւնը գործելու իրաւունքը: Անշուշտ ռուսական կառավարութիւնը չի պիտի ուզէ շուտով մերկանալ իր իրաւունքներէն. բայց չենք կրնար հիմակելնէ գուշակել, թէ ինչ միջոցներու պիտի դիմէ և թէ ո՞րքան առաջ պիտի կրնայ երթալ իր իրաւունքներու պաշտպանութեան գործին մէջ:

Թէև պատրիարքին տւած կամ տալիք պատասխանը չի գիտցիր, բայց կրնանք գուշակել, թէ երբ պատրիարքը տեղի տայ այս պահանջին առջև, ապագային պիտի ծագին այնպիսի բարդ խնդիրներ, որոնց մէջէն պատրիարքն ալ, ազգն ալ չի պիտի կրնան դուրս ելլալ: Նոյն իսկ այսօրէնէ կառավարութիւնը կըսկսի գործադրել պահանջները. թող չի տար, որ Պատրիարքարանը առաջնորդական տեղապահներ խրկէ Սիսի թեմերը, առարկելով թէ՝ Պոլսի պատրիարքի իրաւասութենէն վեր է ադ, և այդ կողմերը Սիսի կաթողիկոսը միայն իրաւունք ունի հովելու:

Միւս կողմէն Սիսը Պոլսի Պատրիարքարանէն անկախ հռչակելով, Բ. Դուռը կը ձգտի զրկելու Սիլիկիոյ հայերը, որոնք մշտական գլխացաւ մըն են իրեն համար—Պատրիարքարանի քաղաքական հովանաւորութենէն և ընդհանրապէս Պոլսի շրջանակներու ազդեցութենէն: Սիս նստող կաթողիկոս մը—ընտրւած ոչ երկնքին և ոչ ալ աշխարհին ծանօթ խեղճուկրակ եպիսկոպոսներէ—իր հօտին պահանջներն ըմբռնելու անընդունակ, իր մենակեացի լուութեամբ ու համակերպութեամբ չը պիտի ընդվզի երբեք—այնպէս կը կարծեն—տիրող կարգերու դէմ, և եթէ փորձէ իսկ, դիւրին պիտի ըլլայ

անոր ձայնը խեղդեղ Սիսի նաւերակներուն մէջ, Մերսի-
նի հիւպատոսներուն ահանջը դեռ չհասած:

Թիւրքերուն այդ քաղաքագիտական հնարները նո-
րութիւն չեն մեզ համար. բիրտ ուժի հետ փոխնիփոխ
բիւզանդական նենգութիւնները չմոռնալ, քրիստոնեայ
հպատակներու մէջ կրօնական երկպառակութիւններ
սերմանել՝ հիշ խաղեր են: Գուցէ կը յուսան թէ Սի-
սի և Էջմիածնի հակաթողութեան, Սիսի և Պաշտի միջև
հակառակութեան խնդիրները կրօնական գոյն մըն ալ
ստանալով, մեր ուշը դարձնեն մեր կենսական Գատէն:
Բայց անաքրոնիզմ են բոլոր այդ ջանքերը: Գազանձեա-
նի կամ այս ու այն կաթողիկոսի և եպիսկոպոսի խն-
դիրներով հետաքրքրելու ո՛չ փափաք և ո՛չ ալ ժա-
մանակ ունինք հիմա:

Հայ ազգը այնչափ բան քաշեց կրօնական նախկին
կռիւներէն, որ կամէութիւն մը իսկ չունի նոյն յիմա-
րութիւնները կրկնելու, գրեթէ կէս-դարու մը փորձէն
ետքը, ան ալ ազգի այս ճգնաժամին:

Մեր վարիչ շրջանակները՝ աշխարհական թէ եկե-
ղեցական, թող խելամուտ ըլլան հայ ժողովուրդին
տրամադրութեանը, անոր կենսական շահերուն, և չըս-
տանձնեն այնպիսի պատասխանատուութիւն մը, որուն
հպարտութիւնը պատմութենէն զատ, արդի սերունդը
պիտի պահանջէ ամենէն առաջ:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

20/1 մայիս.

Վանի նախորդ կուսակալը, որ բաւական մեղմ և խա-
ղաղասէր մարդ էր, պաշտօնանկ եղած է. փոխանորդ-
կարգւեցաւ զինուորական Ֆէրիք Շէմզի փաշա (Բաղէշի
կոտորածին հեղինակը):

Խստութիւններ սկսած են քաղաքին մէջ: Այգես-
տանը պաշարման վիճակի ենթարկւած է. 60-ի չափ
զինուորական վրաններ և կայաններ հաստատւած են
Այգեստանի շուրջը՝ մուտքն ու ելքը արգիլելու համար:

Անգլիական հիւպատոսը, որ շաբաթ մը առաջ
Պարսկաստան գացած էր, Մըսթըր Ալէնի հետ նամակ
մը գրելով տեղիս կուսակալի փոխանորդին, յայտնած
է թէ հայերը մտադիր են յեղափոխական շարժումներ
սկսիլ, և խորհուրդ տւած է խիստ միջոցներ ձեռք առ-
նել, այդ ծրագիրներն իդրեւ հանելու համար: Այդ
երկու խայտառակ լրտեսները իրենց դարձին՝ յայտնե-
ցին նոյնպէս՝ թէ Վանի հայերն ալ խրտուսներ առաջ
պիտի բերեն: Ֆէրիք փաշան սաստկապէս զայրացած՝
մեր ԵԶ առաջնորդը կանչել տւաւ իր քով և խստիւ
պահանջեց բացատրութիւններ տալ այդ մասին:

Յունական պարտութիւնները ճիշտ է որ երես տւին
թիւրքին, բայց ընդհանուր կացութիւնն ալ տագնա-
պալի է. մէկ կողմէն տնտեսական քայքայում, ո՛չ հաց
կայ, ո՛չ դրամ, քիչ ատենէն քաղաքը գտնուող զօրքին
հացն ալ կը սպառուի: Բայց ամենէն աւելի մտատանջու-
թիւն սկսած է պատճառել անոնց՝ երկրին մէջ տեղի
ունեցող այլ և այլ շարժումները: Իրենց բարեկամ
քիւրդերն իսկ տեղ տեղ թշնամական դիրք սկսած են
բռնել: Բաղէշի կողմերու Մօսկանցի քիւրդերը ապստամ-

բած են և բաւական կորուստ պատճառած են կառա-
վարութեան: Այստեղէն երկու անգամ է, որ զօրք կը
խրկւի անոնց վրայ:

* *

27/8 մայիս.

Մօսկանցիներու կռիւը կը շարունակուի. երեք ան-
գամ ետ մղած են կառավարութեան զօրքը: Թիւրքե-
րը զգալի կորուստներ ունեցած են: Հատ տեղերէ
զօրք սկսան քաշել դէպի Մօսկան:

Ն Ա Մ Ա Կ

Պ Ա Ր Ս Ի Կ-Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ա Ղ Մ Ա Ն Ա Գ Ի Խ Ի Ց

6 յուլիս 97

Գարունը անցաւ. բնութիւնը իր շրջանը կանոնաւոր
կերպով շարունակում է. մայիսին կը հետևի յունիսը՝
Վանի ու Վասպուրականի չարագուշակ ամիսը—96-ի
յունիս 3-ից սկսաւ եսամոլ Եւրոպայի աչքի առաջ
Վանայ սրաճարակը: Մօսկի անցեալի սոսկալի կո-
տորածները, բարբարոսութիւնները, սովը, քոլերան ոչ
մի կենդանութեան նշոյլ չեն թողել վասպուրականցի
հայի վրայ: Այս տարի օրէցօր սպասում է կրկին սրա-
ծութիւն «գեաւուրներին»:

Վանի ամերիկացի բողոքական միսիոնարները Ամերի-
կայից փոխադրած 2000 ոսկով եղներ առին, գլխաւո-
րապէս Պարսկաստանից, և բաժանեցին Վասպուրականի
հայ գիւղացիներին, որպէսզի հայ գիւղացին նորից սկսէ
վարել իր արօրն ու գութանը, մշակել դաշտն ու ար-
տօրայքը, ցանել . . . բայց չհնձել: Երբ հարց-
րինք միսիոնարներին, թէ լաւ չէ՞ր լինի, որ ծախսած
գումարի մէկ մասը ղէնքեր գնելու յատկացւէին, որ-
պէսզի հայ գիւղացին ձեռքում ղէնք ունենալով, կա-
րողանար թէ ինքն իրեն և թէ իր գոյքը պաշտպանել
մինչդեռ հիմա, առաջին յարձակումին՝ քիւրդերի սե-
փականութիւնը պիտի դառնան երկրագործական բոլոր
այդ պիտոյքները և հայը գարձեալ մերկ ու անօթի
պիտի մնայ.—պատասխանեցին քրիստոնէաբար. «Այդ-
փողերը մեզ ուղարկած են եղներ գնելու և ո՛չ թէ
արեան գործիքներ»: Ահա՛ լուսաւորւած ամերիկացու
հայեացքը:

Մայիսի կէսին Վանի անգլիական հիւպատոսը եկաւ
այս կողմերը. մի ամսի չափ մնալուց յետոյ վերադարձաւ
Լսում ենք, որ այդ հիւպատոսը եկել էր լրտեսելու
տաճիկ կառավարութեան կողմից, շատ հաւանական էլ
է թուում այս լուրը, որովհետեւ նրա Վան դառնալուց
յետոյ, սահմանագլխի զօրքը աւելացրին համարիէ գըն-
դերով ևս:

Վանը ճգնաժամի մէջ է. քաղաքում և Այգեստա-
նում եղած հայերը շրջապատւած են սուլթանի շուռ
ցինուրներով: Քաղաքին մօտիկ լեռնոտ մի քանի դիր-
քեր բռնել է կառավարութիւնը՝ թնդանօթներով և
զօրքով: Գայմազամանիստ Սարայ գիւղաքաղաքը, որ
սահմանագլուխ է լցւած է զօրքով և թնդանօթներով:
Աղբակը, Բաշկալէն և Բարթուղիմէոսի վանքը նոյնպէս:

Աննկարագրելի է «Ֆէդայի» ներքի թողած սարսա-

փը քիւրդերի և տաճիկ կառավարութեան վրայ: Գիշերները գրեթէ անքուն են անցկացնում: Մի գլորդոց, մի շշուկ լսելիս՝ հարայ հրոց է ընկնում քիւրդերի մէջ: «Գաշախէ փլան հանդըն» (հայ ֆէդայիները եկան):

Մարզեցոց ցեղապետ Շարաֆ բէյին, որ Աղբալի աւերողն է, այս օրերը Վան կանչեցին. բայց անպիտանը առաջուց պատրաստել էր մի հնար Վանից դուրս պրծնելու. «Երբ որ Վանում կ'ուշանամ, — այդպէս էր պատկերած, — շուտ մի խաբար բերէք թէ «ֆէդայիները» սահմանից ներս անցան»: Այդպէս էլ եղաւ. մի քանի օր յետոյ նրա մարդիկը հայ «ֆէդայի»-ների յարձակման լուրն են տանում Վան՝ վազ կերպով. կառավարութիւնը ապշած յետ է ուղարկում Շարաֆ բէյին, պատկերելով, որ չթողնեն մի հատ «ֆէդայի» զըլ պրծնի:

Այս քանի օր է, որ սահմանագլխի չիկակ կոչւած քրդերը խառնակութիւններ են անում Խոյ և Սալմաստ գաւառներում. մօտ 8-10 պարսիկ սպանւած է: Մի հաւանական լուր է պատում, իբր թէ տաճիկ կառավարութիւնից գրգռած անում են:

Վերջապէս այդ բոլոր խաղերը և նենգութիւնները հայի հափար են պատրաստում, բայց մէք հաւատացած ենք, որ թշուառի Աստուծոյ միշտ զօրեղ է լինում, իրաւունքը չի կորչի, կը կորչին միայն անիրաւները. թող ամաչէ հացկատակ և շահախնդիր Եւրոպան, լիբը սուլթանի վատների կծիկը. իսկ հայ ֆէդայիին մնում է միայն և միայն անյողողող երթալ առաջ:

Դե՛հ առաջ «ֆէդայի», առաջ, թող տեսնեն և աւելի համոզեն թող մուսուլմանները, թէ հայ ֆէդայիները մեռնել գիտեն իրենց հայրենիքի համար, մեռնել ապրելու համար: Առաջ «ֆէդայի»: Քրդերէն առաջը քեզ համար է առած «Խորտիան սիօր թիւնիս» (կորիճին սահման չկայ) . . . Բու սարսափդ մինչև անգամ առածներ է ստեղծել քրդերի մէջ: «Բարգէ ֆէդայիան տէ գըլմանջան գը բենը» (ֆէդայիների գնդակը քիւրդին ետեկից գնալով՝ կը գտնէ և կըսպաննէ):

Դե՛հ առաջ ֆէդայի:

Տաճկաստանին սահմանակից Ուրմիոյ 5-6 հազար տուն ասորիները այս օրեր օրթողդոսութեան թակարդն ընկան և խաբւած ուռացան:

Արդէն Ուրմիում այժմ կայ մի ուռա քահանայ: Ասում են, թէ Մար-Շիմոնն էլ, ճօլամբերիկի այդ առիւծը, իր կորիւններով պէտք է ուռա լինի . . .

Պարսիկները իրարանցման մէջ են: Մար-Շիմոնի այդ դիտաւորութիւնը շատ վատ տպաւորութիւն է թողնում բոլորի վրայ:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Ր Զ Ը

Եւրոպայի անսպասելի ու քարքարոտական կոտորածին առթիւ, թիւրք կառավարութիւնը--եթէ կարելի է կառավարութիւնը ըսել--առաջին անգամ ըլլալով Պոլսի լրագրերուն միջոցով, փողով ու թղթով կը յայտարարէր, թէ սուլթանը սաստիկ զգածուած թողնելու չափ--այդ վայրենի արարքէն, հրամայել է, որ շուտ մը վերջ տրւի խառնակութեան եւ յանցանքները օրէնքի խստութիւնով

պատժել: Եւրոպայի շահերծուքի սպասող աներես թերթերը զոհանակութիւնով հրատարակեցին այս լուրը: Հարիւրաւոր անհոններու խռրչումը չէր, որ կը շահագրգռէր զիրենք, այլ եւրոպային վեհ, մարդասէր ու անաշտ վարիչքը, որ իր աստուածապետական տախտին վրայէն, թող կուտար իրեն, երկնային ներշնչումով մը, մինչեւ իսկ կեանքները շարող միսիւլմանները պատժելու հրամանը արձակել: Ասով, Բ. Դրան տարեգրութիւններուն մէջ, սուլթանը արդարադատութեան նորածնութիւնը մոցուցած եղաւ, իբրեւ արտակարգ երեւոյթ մը թիւրքիոյ համար:

Վերջապէս, «ուրտը կլլելու եւ մթնուկը քամելու» սկզբունքով եւ միամիտ Եւրոպայի աչքին քան մը ըրած ըլլալու համար, քանի մը թիւրքեր դատաւարութեան, իբր հեղինակ այդ քանիպալական կոտորածին: Թօքաթի թիւրք մարդասպան զոհը իմանալով, որ յանցաւորները մահուան պիտի դատաւարուին, քիւրք ու ղէնքեր շաւկած կը վազէ կառավարչին պալատը ու մահապարտներուն անմիջական ազատումը կը պահանջէ. յետոյ այդ ցոյցը ընդունելը «սէօզ պիր-Ալան պիր» ըսելով, ուղղակի սուլթանին հեռագիր մը կը գարնին (Բ. Դուրը աշխատեցաւ հերքել), որ իր սեղմ ու երկսայրի լեզուով հսկայ դատաւարութիւն մըն է թիւրք կառավարութեան դէմ: Այդ հեռագիրը զգուշօրէն մատնանիշ կ'ընէ, թէ ո՛ր պէտք է փնտրուի մութին մէջէն զործող դէմքը, եւ կը հասկցնէ շատ սրամիտ կերպով, որ կախաղանը Թօքաթի մէջ չէ, հապա ելլողի վրայ տնկելու է: Ահա այդ հեռագիրը. «յնշո՛ւ Թօքաթի սպանիչները պատժելու եւ ոչ Սվազի, Կիւրիին եւ ուրիշ տեղերունը: Կամ կոտորածները օրինաւոր էին կամ ոչ. եթէ ոչ, պէտք է պատիժը սկսիլ այն քաղաքներէն ուր ամենամեծ վայրագութիւնները գործեցան»:

Շատ կտրուկ, ու շատ արդար տրամաբանութիւն մը. եւ այս հատուածիկը, թիւրքիոյ վայրենային քնազդներուն մէջ, մտքի պատահական գեղեցիկ ցայտը մը կը ներկայացնէ: Բայց դժբախտաբար բացառութիւնները ընդհանուր օրէնք չեն համարուիր:

Երկրորդ հասկցաւ այդ լակոնական տողերու ոգին. ինք, որ քնաւ չէր սպասեր իր անամամիտ ժողովուրդէն այդքան յանդգնութիւն. մանաւանդ անոր մոլեռանդ ու քարշ քնազդներուն եւ այդքան խորհելու կարողութիւն երբեք չէր յուսար: Ի՛նչ եղաւ հետեւանքը: Սուլթանը ըմբռնեց, թէ միսիւլման մը կեանքները սպաննած ըլլալուն, մահուան դատաւարութեան աններելի էշութիւն մը պիտի ըլլար իրեն համար. ուստի լռեց: Զէ՛ որ աստուածային լոռութեան մէջ շատ խորհուրդներ կարող են ծածուկ մտաւ . . .

Մենք կը գովենք մահմետական ամբոխի այդ գիտակից ընթացքը. բայց փափաքելի էր, որ այդ խաժամիւծը ոճիքը գործելէ առաջ ալ տրամաբանողի ապացոյցը տար: Թօքաթի տաճիկները, քանի որ իրենց աչքին առջեւ ունէին արիւնլայ չայաստանը ու անոր տարտաք խոցերը, կարող էին նոյն տրամաբանութիւնով հարցնել. «այդ կոտորածները մարդկային էին, թէ հակամարդկային, իրենց կառավարութիւնը սրիկայական քաղաքականութեան մը կը հետեւէր, թէ ազնիւ . . .»: Բայց հնչապէս կ'երեւի, թիւրքերը քեզ շատ կը տրամաբանեն . . . մարդկային զգացումն է միայն որ կը պակսի իրենց:

Եթէ կեանքներն իսկը վերջէն կուգայ, ափսոս, թիւրքին իսկը քնաւ չի գար: Յեղափոխութիւնը Թօքաթի դէպքը իր պատժական օրակարգին մէջ խնամով կ'արժանագրէ:

Թուրանթի արձագանքներէն ետքը լնցի ու թշուառութեան ծշերտութեան է որ կը համնի թեսալիպէն: Յունաստանի թիւրքիոյ ու ամբողջ Եւրոպայի դրամապետութեան ուժին տակ ծղւած ու հեւասպառ, այսօր լալագին կընայի քաղաքակիրթ մարդկութեան, որ իր սեւ ծակին գիրը վճռեց: Յունաստանը քարոքանդ եղաւ, որովհետեւ պետութիւնները այնպէս կամեցան, որովհետեւ թիւրքիան աւելի կը գոհացնէր եւրոպական շարաշահութիւնը: Երբ սուլթանը ամբողջ Եւրոպան ունէր թեւութիւնը, ո՛վ կարգիւէր զինքը չայաստանը գերեզման մը ընելէ ետքը, Յունաստանն ալ մոխրի վրայ նըստեցնել: Ո՛ր տէրութիւն աւելի քնական կոչում ունէր այդտեակ քարքարոսութեան: Թեսալիոյ հէք ժողովուրդը, անաքել օսմանեան օտարոտի սաղիքներէն, սրտի խշխշանքով կը դիտէ իր կեանքի ու պատուի աւերումը, անյուսութիւնով կը նայի ծովան, երբ ծիւնը պիտի գայ ծերմակ պատանք հիւսել լացող ու սրսիւն աւերակներուն վրայ, առանց կարենալ խանձարբելու սահմուկած ժողովրդին անհուն խեղճութիւնը: Թեսալիան շատ պիտի տընի ու անիծէ մինչեւ որ յաջողի քարքարոսութեան վերջին հետքը սրբել իր հողին վրայէն:

Թեսալիոյ սրտածմլիկ վիճակը չի ցնցեր քնաւ դիւանագէտներու ջնջուի ջիղերը: Բանակցութիւնները կը շարունակին անհոգ եւ «բէֆֆիէ»: Յունաստանը խղճով ծայրով կը բողբոքէ դանդաղութեան դէմ՝ իսկ Դուրը «հավաշեալաշի» իր յաւիտենական քայլերը կը կրկնայ: Ետ առաջ կը տնտայ. պայրամները կը համիւ. կը արդողի, միմայանայ Յունաստանի, կըսպանայ . . . Եւրոպային: Բաղաքակիրթ աշխարհի զայրոյթին դէմ կը հանէ միսիւլման ամբոխին տրիւնաբեւ մոլեգնութիւնը: Դեսպանները ծարահատած են, թէ եւ կըսեն, թէ միահամուռ ծնշման տակ, սուլթանը պզտիկ նահանջ մը ըրած է. . . յաղթական:

Յունաստանի համար զինադաշարի զգոգումը մահաբեր է. նոյն-
քան ալ Թիւրքիոյ համար. քայց Թրքական անսխառտեղ ու թըլ-
փառ միտքը, առական գործին չափ փշուած, Աթէ՛նք, Աթէ՛նք, Լի-
զադակէ: Օսմանեան անուայ պաշխօզութեանը Ակրօքօլի շուքին
տակ կուգնն ցամքեցնել իրենց քրտինքը . . .

Յարը երկու անգամ ինքնագիր նամակ դրկեց խալիֆային--խիստ
քարեցական լեզուով, կըսեն,--որպէսզի Թեսալիան պարպէ. քայց
սուլթանը այդ «մոսկով կեանքներն» զրաճնեցուն պատասխանեց,
թէ Թեսալիայէն հեռացումը, կարող է երկիրը խոռվութեան մասնել,
որոն հետեւանքի մասին--քրիստոնեաներու ընդհանուր ջարդ մը
կ'անարկէ--ամէն պատասխանատուութենէ հեռու կը պահէ ինք-
զինք: Թիւրքերու Թեսալիայէն հեռանալու պահուն, եթէ Պոլսի մէջ
խոռվութիւն պայթի, տէրութեանց դաւաճան նաւերը 5000 զինուոր
պիտի՝ հանեն ցամաք:

Անշուշտ, չուլթանի այդ վսեմ յամառութիւնը ու լքութիւնը իր
արդարացի կողմերը ունի: Սալգարի, որուն խօսածներէն տամեն
տամենկուրը սուտ են, իր նոր լեզւային մարգարէին մէջ կը մեղա-
դէր սուլթանը, որ կ'ուշացնէր խաղաղութիւնը եւ կը ջլատէր պե-
տութեանց ճիգերը: Եւ կ'աւելցնէր, ա. տրտը, թէ քանի ներկայ
վիճակը 1878-ի կացութեան մօտիկնայ, այնքան կարելի է շուտ եւ
զոհացուցիչ լուծում յուսալ:

Ինչպէս կ'երեւի, Սալգարին սպասողական կամ քնական քաղա-
քականութեան կը հետեւի, ուր ժամանակը ամէն քան պիտի հա-
սունցնէ, ծամէ ու պատրաստէ, եւ դիւանագիտութիւնը այն ատեն
առանց այլեւայլի իր թաթը պիտի նետէ քարոյապէս ու նիւթա-
պէս աղբ եղած երկրին վրայ: Ասկէ ետքը, կ'ըսէր, օր միջ ալ,
Թիւրքիոյ անդամահատումը առանց ցնցումի կարող է կատարել:
Քայց Սալգարին խեղճութենէ կը հասկնայ արդեօք, թէ դիւանա-
գիտական խղճի ծկունութիւնը հաշտ չէ ազգերու թշուառութեան
հետ, կարելի չէ՞ միթէ քաղաքական կանաչ սեղաններու շուրջը,
քիչ մըն ալ մարդկորէն խորհիլ . . .

* *

Սուլթանը ինքզինք ժողովրդեան վրէժխնդրութեան նշաւակ հըռ-
չակելով, միշտ փախցունը կուտայ. երբեմն ալ մեղմանաձեղի պէս
լործուն պղտորութեան մը մէջ կը ջանայ հետկորուստ ըլլալ: Եւրո-
պայի խաղաղութեան պահակները սուլթանի խաղերը սիրով կը
կլեն լկրամած մանչուկի մը գզլանքները տալով անոր:

Եւրոպական համերաշխութիւնը վարդագոյն չէ. եւ քանակցու-
թիւնները, հակառակ թափառիկ, հակասող ու ծամծմած լուրերուն,
չեն քաշեր: Քայց ըսել չէ, թէ Թիւրքը Թաւիշի վրայ կը միափէ . . .
Մարդիկ վաթսուն օրւան մէջ աշխարհի շրջանը կ'ընեն, իսկ դժ-
բախտ դեսպանները Թօփհանէի պալատին շորս պատերէն անդին
չանցան. եւ դեռ կըսեն, թէ ելեքտրականութեան դարու մէջ կ'ապ-
րինք: Գուցէ պետութիւններն ալ նաստատակը սալլակով որսալու
մէթոտը ընդունած են:

Արդեօք դիւթական խաղ մը չը՞ սարքիր . . . Թրքական փաթտո-
ցին ըլլորը:
Ողջ մնացողը կը տեսնէ:

* *

Սանճազը շէրիֆի շուքին տակ խալիֆան դեռ շատ քաներ կը
խոստանայ ընել: Խուժանին խաբուսիկ յուզումը լեղի պտուղ տալ
առեր է: Նեղիտօֆը երկու անգամ է կը նախատուի զինուորէ մը ե
պպայէ մը, իբր թէ Ռուսիա Թեսալիան խլել կուզէ եղեր: Դուռը
ազգային հերոսներ կը նկատէ թշնամանողները, Նեղիտօֆին ալ կըսէ
փափուկ են: Իսկ Յարի տխրահռչակ դեսպանը քծծիաղով մը կը
պատասխանէ Դրան. «Զարկէք, քայց Յարիկըստը» . . .

* *

Օրւան կարեւոր նշանակութիւն է Գերմանիոյ կայսեր ծախ աչքին
արկածը: Վիլհէլմը յաւիտենականին առջեւ նախասահմանած զօ-
սաշրջիկ մին է: Յոքի սատանին պէս ամէն րոպէ պատրաստ է ըսե-
լու. «Երկրի փայ ման կուգամ»: Նորերս երբ նաւով Նորվեկիոյ
ջրերուն մէջ հիւսիսային տարեկան զօսարշաւը կ'ընէր, դիպակածով
կայմէն շուանի ծօթ մը կ'իյնայ ու ծախ աչքին պտուղը կը ծաթեցնէ . . .
մարմին մէկ ծր ա գ զ խաւարցնելով:

Այդ արժանախա փորձանքը հաւանական է քայգէրի հպտնտիւր
խեղութիւններուն վրայ միաջէնի հոյակապ տեսքն ալ պիտի աւելցնէ:
Ան ատեն, տեղն է ըսել, երկաշէններու մէջ միաշէնները թազաւոր.
Ամիս մը առաջ ալ քիչ մնաց կատաղի աւելոծութեան մը ատեն է-
նահատակ ըլլար . . .

Այդ աղէտին մէջ շատեր ընտելեան վրէժխնդիր խորհուրդ մը
նկատել ուզեցին: Արդեօք մեր քարի մամիկները իրենց անէծքի քա-
ծինը ունին՝ այդ արդար փորձանքին մէջ. արդեօք իրենց անմի-
թար սրտի խորունկէն անգիտակցաբար տիեզերական մեծ խոր-
հուրդը վրդովեցին՝ «աչքը քէօքնայ» հառնելով:

Ինչ ալ ըլլայ, մարդկային սիրուն նախապաշարում. մը երբորդ

եւ աւելի ահաւոր փորձանքի մը կըսպասէ: այդ մարդկային ազգի
հայէնին դէմ: Համէքի մը պէտքը չկայ: Բնութիւնը իր վրայ առած
արդէն այդ մեծ աստանդականին դատաւնիքը:
«Հնողաց զտնողաց»:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ՎԻՃԱՊ քղ-ի Կեդր. Կօմիտէն ստացած է.
Արծիւ խ. 10 դհ, Զրվէթ խ. 40 դհ, Շղթայ 10
դհ, Ճ Կ. 10 դհ, Կապը 10 դհ, Սէր 10 դհ.

Մակաթերուն քաղաքէն՝ Ղանաշի Ադուէսի ձեռքով
50 ռուբլի:

ՎՐԷԺ Կեդր. Կօմիտէն ստացած է.
1897 ապրիլին. — Թուրանի «Աշրաֆի» խմբի միջոցով
Բարֆր. քաղաքից Յ. Ս-ի ձեռքով հանգանակւած
1000 ղան.

1897 մայիսին. — Թուրան քաղաքից նւէր Վինակրից
(փոխադրւած Գագիկի և Ֆիլիպի միջոցով) 5000 ղան.

1897 փետր. — Սափալան քղ. հայերից հանգանակւած՝
Գ. Շ. 100 ղան, Ս. Ե. 100 ղան, Ա. Գ. Խ. 50 ղան,
Սափայ Մարգարեան 100 ղան, Արզուման 60 ղան, Յարո
50 ղան, Օր. Սաթինիկ 60 ղան, Աշխէն Տէր Մանուէլեան
50 ղան, Զանեանց 40 ղան, Թունեանց 30 ղան, Մ. Յա-
կովբեանց 35 ղան, Մ. Պետրոսեանց 25 ղան, Մ. Յարու-
թիւնեանց 25 ղան, Կ. Տէր-Յակովբեանց 25 ղան, Ս.
Խան 20 ղան, Մ. Գրիգորեանց 20 ղան, Թ. Մ. Մնացա-
կանեանց 10 ղան, Ե. Տէր-Գարրիէլեանց 20 ղան, Մ.
Աղայեանց 25 ղան, Գ. Եղիազարեանց 10 ղան, Ա. Սա-
հարեանց 10 ղան, Ս. Տէր-Յովհաննէսեանց 20 ղան, Գ.
Խաչատուրեանց 15 ղան: (Համագումար 900 ղան):

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՏԻ Կօմիտէն ստացած է.
Շիլթիմ 15 ռուբլի, 2օրս մարդ 2 ռ. 90 կոպէկ:
ՈՍԿԷՅԱՆՔ քղ-ի Կօմիտէն ստացած է.
Վրէժ խ. 2 մէճիտ, Թուրակ խ. 2 մէճիտ, Որոտում խ.
1 մէճիտ, Գամելիա 2 1/2 մէճիտ, Անդրանիկ 1 1/2 մէճիտ:

Տեղի անձկութեան պատճառով, յաջորդ թւին մէջ միայն
կարելի պիտի ըլլայ հրատարակել նւիրատուութեան ցու-
ցակները՝ Խմբագրութեանս, Տապար քղ-ի եւ Պալքանեան
Կեդրոնական, Վառնայի եւ Ռուչուքի Կօմիտէներուն:

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Կը հրաւիրենք հասարակութիւնը զգուշանալ եւ
ի սպառ չվստահիլ ԱՍՍ.ՏԱԻՐ ԳԱՆԼԵԱՆ (կեղծ անու-
նը Արամ Արամեան, Ա. Պ. Մալքաս) անուն ամերիկեան
հպատակ պարոնի մը, որ չարաչար գործածելով Պրովիտէն-
սի (Ամերիկա) դաշնակցական Կօմիտէի մէջ իր քարտուղա-
րութեան պաշտօնը, կտորած է ատենադպրի գզրոցը եւ կօ-
միտէի կնիքը գողնալով, կեղծ վկայականներ շինած է:
Ատոնցմէ մէկն իր բուն անունը կը կրէ--Ասատուր Գան-
լեանի, մէկը՝ Գրիգոր Ազարեան, միւսները չի զիտցւիր ինչ
անուններ:

Այդ իսպազողը Ամերիկայէն արդէն փախած է եւ մեկ-
նած է Միջերկրականի ճամբով:
Կը խնդրուի անյապաղ տեղեկութիւն տալ տեղական կօ-
միտէներուն կամ Խմբագրութեանս առաջին առթիւ, երբ
անոր ուր ըլլալը կամ ի՞նչ ընելը գիտցուի:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)